Արա Հովհաննիսյան
ԵՊՀ համալսարանի արաբագիտության ամբիոնի հայցորդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմությունը և հատկապես դիվանագիտության հետազոտությունը շատ կարևոր է և արդիական: Չմոռանանք, որ Հայաստանը շուրջ 70 տարի եղել է Խորհրդային Միության կազմում և չի վարել ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Եվ այդ առումով հայ-սիրիական հարաբերությունների նորագույն շրջանի ուսումնասիրությունը և վերլուծությունը կարող են շատ օգտակար լինել ապագայում ավելի նպատակային, պետականամետ քաղաքականություն վարելու համար:

1991 թ. Հայաստանը անկախություն ձեռք բերեց և նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը: Սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության պաշտոնական հռչակումով Հայաստանը իրական հնարավորություն ստացավ հայտնվել մերձավորարևելյան տարածաշրջանում որպես անկախ և ինքնուրույն պետություն[1]: Նա հնարավորություն ստացավ այս տարածաշրջանում ռազմաստրատեգիական, տնտեսական, քաղաքական և մշակութային համակարգի մաս կազմելու: Սիրիայի Արաբական Հանրապետությունը (ՍԱՀ) առաջիններից էր, որ 1991 թ. դեկտեմբերին ճանաչեց Հայաստանի անկախությունը[2]: Սիրիան հանդիսանում էր մի երկիր, որի հետ հայ ժողովուրդը ուներ բարեկամական և եղբայրական ավանդական հարաբերություններ: Բացի այդ Սիրիայում գոյություն ուներ բավականին մեծ հայ համայնք, որը ստվարացել էր հատկապես 1915 թ. Մեծ եղեռնից հետո[3]: Տեղի արաբ ժողովուրդը գրկաբաց ընդունեց և ապաստան տվեց հայերին: Չմոռանանք նաև, որ ավելի քան 200 տարի Հայաստանը եղել է արաբական տիրապետության տակ և հենց այս տևական ժամանակաշրջանում է, որ ձևավորվել ու ամրապնդվել է պատմամշակութային կապը հայ և արաբ ժողովուրդների միջև: Հայերն իրենց կարևոր ներդրումն են ունեցել արաբական զարթոնքի մեջ, ակտիվորեն մասնակցել քաղաքական և մշակութային կյանքում: Բարեկամ ժողովուրդներ լինելու ավանդույթը շարունակվեց նաև խորհրդային տարիներին, որի վառ ապացույցն է Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ Ասադի այցելությունը 1979 թ. այն ժամանակվա **խորհրդային** Հայաստանի մայրաքաղաք Երևան[4]: Երկկողմ հարաբերությունները առավել ակտիվ փուլ մտան Հայաստանի անկախացումից հետո: 1992 թ. մարտին Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև ստորագրվեց համաձայնագիր դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին՝ սկիզբ դնելով երկկողմ հարաբերությունների զարգացմանը[1]: Համաձայնագիրը ստորագրվեց Դամասկոսում Հայաստանի արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի և Սիրիայի արտաքին գործերի նախարար Ֆարուկ ալ Շարայի կողմից, որը տեղի ունեցավ Ռաֆֆի Հովհաննիսյանի Մերձավոր Արևելքի երկրներ կատարած այցելության ժամանակ[2]: Նույն ամսվա վերջին, ավելի ստույգ՝ մարտի 29-ին տեղի ունեցավ նաև ՍԱՀ պատվիրակության այցը Հայաստան՝ արտաքին գործերի նախարար Ֆարուկ ալ Շարայի գլխավորությամբ[3]: Ժամանման օրը, երեկոյան, պատվիրակությունը ընդունելության արժանացավ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմից: Մարտի 30-ի առավոտյան Երևանի բարձրաստիճան հյուրերի ընդունելությունների տանը ՍԱՀ պատվիրակությանը ընդունեց ՀՀ արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը: Պատվիրակության կազմում էր նաև Ռուսաստանում Սիրիայի դեսպանը: Հանդիպման ընթացքում Հայաստանի և Սիրիայի արտգործնախարարները ստորագրեցին երկու կարևոր փաստաթուղթ, որոնցից առաջինը ՀՀ և ՍԱՀ արտաքին գործոց նախարարների միջև համագործակցության և մշտական խորհրդակցություններ անցկացնելու մասին արձանագրությունն էր, իսկ երկրորդը՝ երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը[4]: Ստորագրվեց նաև երկու երկրների միջև մշակութային համագործակցության համաձայնագիր: Վերը նշված համաձայնագրերի ստորագրումը չափազանց կարևոր էր երկու երկրների համար, քանզի ԽՍՀՄ փլուզումից հետո երկկողմ համագործակցությունը պաշտոնապես դրվում էր օրինական հիմքի վրա, որը հեռանկար էր բացում հետագայում խորանալու բոլոր ուղղություններով: Բացի այդ մեր կարծիքով այն մեծ քայլ էր Հայաստանի համար տարածաշրջանի գործընթացներին ինտեգրվելու և մաս կազմելու համար: ՍԱՀ արտաքին գործերի նախարարին ընդունեց նաև ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանը: Հանդիպմանը ներկա էին Հայաստանի արտաքին գործերի նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը և Ռուսաստանում Սիրիայի դեսպան Ալ Նայեր Իսամին[5]: Գագիկ Հարությունյանը անդրադարձել էր Խորհրդային Միության փլուզումից հետո տարածաշրջանում ստեղծված նոր քաղաքական կացությանը: Սիրիայի ԱԳՆ նախարարը, գնահատելով Հայաստանի խաղաղ նախաձեռնությունները, նշել է, թե ցանկալի է, որ Սիրիան և Հայաստանը շարունակեն քաղաքական հանդիպումները և կարծիքների փոխանակությունները տարածաշրջանի իրադարձության շուրջ: Ապա քննարկվել են նաև հայ-սիրիական համագործակցությանն առնչվող հարցեր: Ֆարուկ Ալ Շարան ընդգծել է նաև, որ փոխշահավետ համագործակցության կարևոր կողմերից մեկը այն է, որ Սիրիան կարող է դարպաս դառնալ Հայաստանի համար դեպի արտաքին աշխարհ[6]: Մեր կարծիքով կողմերի համագործակցությունը իրոք փոխշահավետ էր: Սիրիայի հետ ամուր և կայուն հարաբերություններ ստեղծելով՝ Հայաստանը կարող էր դուրս գալ դեպի Մերձավոր Արևելք և տարածաշրջանի այլ երկրներ՝ հաստատելով դիվանագիտական, առևտրատնտեսական, մշակութային և այլ կարգի հարաբերություններ: Պետք չէ նաև մոռանալ, որ Սիրիան հանդիսանում էր տարածաշրջ-

[1] Տե՛ս **Ն. Հովհաննիսյան**, Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը, Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 16, Երևան, 1996, էջ 11:
[2] www. Aysor.am. news/2009/06/16/ Վերցված է 23.01.2012 թ.:
[3] «Հայացք», շաբաթաթերթ, թիվ 8(25), 04.03. 2011 թ.:
[4] Տե՛ս «Նոր Կեանք», Գլենդել,10.08.2000 թ.:

[1] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ Գ, 249, էջ 2:
[2] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ,10.03.1992 թ.:
[3] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ Գ, 249, էջ 3:
[4] Նույն տեղում:
[5] Տե՛ս «Երկիր», օրաթերթ, 31.03. 1992 թ.:
[6] Նույն տեղում:

ջանի կարևոր դերակատարներից մեկը: Սիրիան իր հերթին կարող էր Հայաստանի միջոցով դուրս գալ Անդրկովկաս և ԱՊՀ այլ երկրներ, որոնց հետ Հայաստանը դեռևս ԽՍՀՄ ժամանակներից ուներ շատ սերտ և բազմակողմանի հարաբերություններ:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ 1992 թ. մարտին տեղի ունեցած երկու երկրների միջև ԱԳՆ նախարարների պատվիրակությունների այցելություններով սկիզբ դրվեց նրանց դիվանագիտական կապերին:

1992 թ. ապրիլին ՍԱՀ նախագահ Հաֆեզ ալ Ասադի հրավերով եռօրյա պաշտոնական այցով Սիրիա մեկնեց ՀՀ նախագահ Լևոն Տեր- Պետրոսյանը: Երկու երկրների նախագահների հանդիպման ընթացքում, որին ներկա էին Հայաստանի և Սիրիայի ԱԳՆ նախարարները, քննարկվեցին միջազգային կյանքի և տարածաշրջանի վերջին իրադարձությունները, երկկողմ հարաբերությունների զարգացման հնարավորությունները[1]: Բանակցությունների ընթացքում քննարկվեցին նաև նրանց հետաքրքրող մի շարք հարցեր: Հետագա գործնական ծրագրերի մշակման նպատակով համաձայնություն ձեռք բերվեց խառը հանձնախումբ կազմելու շուրջ: Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին դիմավորեցին պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, հայ համայնքի հոգևոր առաջնորդներ, ազգային տարբեր կազմակերպությունների պատասխանատուներ: Լևոն Տեր-Պետրոսյանը Սիրիա կատարած այցելությունը գնահատեց որպես խիստ գործնական և արդյունավետ: Նախագահի այցը Սիրիա խիստ կարևորվեց նաև սիրիական պաշտոնական շրջանակներում և համարվեց պատմական[2]:

1992 թ. հուլիսին Սիրիայում էր գտնվում ՀՀ ԱԳՆ պատվիրակությունը՝ փոխնախարար Արման Կիրակոսյանի գլխավորությամբ, որին ընդունեց Սիրիայի ԱԳՆ նախարարը: Այցելության ընթացքում ստորագրվեց երկու երկրների միջև հյուպատոսական համաձայնագիր[3]:

1992 թ. նոյեմբերից Դամասկոսում սկսեց գործել ՀՀ դեսպանատունը, որտեղ ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար նշանակվեց Դավիթ Հովհաննիսյանը, իսկ 1993 թ. փետրվարին Հալեպում բացվեց ՀՀ հյուպատոսարանը: Գլխավոր հյուպատոս նշանակվեց Պողոս Սարաջյանը[4]:

1993 թ. ապրիլին Դամասկոսում տեղի ունեցավ ՀՀ դեսպանատան բացման արարողությունը, որին ներկա էին ՀՀ պատվիրակությունը՝ ՀՀ ԱԳՆ նախարար Վահան Փափազյանի գլխավորությամբ[5]: Վերջինս հանդիպումներ ունեցավ ՍԱՀ նախագահի, վարչապետի, ԱԳՆ նախարարի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին երկկողմանի հարաբերությունների ամրապնդման հնարավորությունները, նորաբաց դեսպանատան դերը և այլ խնդիրներ: Մեր պատվիրակության ապրիլի 4-8-ը կայացած պաշտոնական այցը բացի դեսպանատան բացման պաշտոնական արարողությանը մասնակցելուց նաև լավ առիթ էր հայ-սիրիական դիվանագիտական հարաբերությունները բարելավելու և ամրապնդելու համար: Այն նաև լավ հնարավորություն էր արաբական հանրությանը ծանոթացնելու և բացատրելու Ղարա-

[1] Տե՛ս «Դաշնակցություն» օրաթերթ, 1998 թ. մայիս, № 7:
[2] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 143, էջ 2, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 20.10.1994 թ.:
[3] Տե՛ս ՀՀ Ա.Ա ֆոնդ 326 Դ. 9, դ. 36, էջ 46:
[4] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 249, էջ 3:
[5] Տե՛ս ՀՀ ՊԴԱ, գ. 249, էջ 69:

բաղյան հարցի էությունը, Հայաստանի որդեգրած քաղաքականությունը հատկապես այդ օրերին, երբ պատերազմական գործողություններ էին ընթանում ԼՂ-ում: Սիրիական կողմը իր հերթին մտահոգություն էր հայտնում՝ կապված ԼՂ-ում ստեղծված իրավիճակի հետ և շեշտում խաղաղ ճանապարհով հարցի լուծման անհրաժեշտությունը[1]:

1992 թ. նոյեմբերից գործող ՀՀ դեսպանատունը և 1993 թ. փետրվարից Հալեպի ՀՀ հյուպատոսարանը բնականաբար նշանակալից դեր խաղացին ՀՀ և ՍԱՀ միջև դիվանագիտական կապերի ամրապնդման գործում, որ կանոնավոր հիմքի վրա դրեցին միջպետական հարաբերությունները և նպաստեցին դրանց ավելի ինտենսիվ, ռացիոնալ և գործնական դարձնելուն: Դրանք շատ մեծ նշանակություն ունեցան տեղի հայ համայնքի համար: Հայ համայնքի կապը մայր հայրենիքի հետ հեշտացավ և դարձավ ավելի սերտ: Այսպես, 1992 թ. մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետություն» թերթի տվյալներով Սիրիայում ապրում էր շուրջ 175 հազար հայ, որը, կարծում եմ, բավական մեծ թիվ է, սակայն նույն Հայաստանի Հանրապետությունը 1994 թ. հոկտեմբերի 20-ին, արդեն հղում անելով Սիրիայում ՀՀ-ի դեսպանատան տվյալներին, նշում էր, որ հայ գաղթօջախի թվաքանակը կազմում է 95 հազար: Փաստորեն 2 տարվա ընթացքում հրապարակվում են 2 տարբեր թվեր, որոնցից առավել հավանականը 95 հազարն է, քանի որ Սիրիայում գտնվող Հայաստանի դեսպանատան տեղեկությունը կարող է առավել ճշգրիտ լինել: Միաժամանակ Հայաստանը միակ երկիրն էր ԽՍՀՄ տարածքում (Ռուսաստանից բացի), որ ՍԱՀ տարածքում ունեցավ դեսպանատուն և հաստատեց կայուն դիվանագիտական կապեր[2]:

1993 թ. դեկտեմբերին ՍԱՀ այցելեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը՝ իր պաշտոնակցի հրավերով: Երկու երկրների խորհրդարանների միջև ստորագրվեց համագործակցության և հայ-սիրիական խորհրդարանական բարեկամության ընկերություն հիմնելու մասին համաձայնագիր[3]: Բ. Արարքցյանը հանդիպումներ ունեցավ ՍԱՀ նախագահի, փոխնախագահ Խադամիի, ԱԳՆ նախարարի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին ինչպես ԼՂ հակամարտության, այնպես էլ ողջ մերձավորարևելյան տարածաշրջանում համընդհանուր և արդար խաղաղության հաստատման հնարավորությունները[4]: Որոշվեց նաև զարկ տալ տնտեսական, մշակութային, առևտրական, գիտական, քաղաքական գործակցությանը:

1994 թ. Հալեպում գլխավոր հյուպատոսի պաշտոնակատար նշանակվեց Լևոն Սարգսյանը[5]: Նույն թվականի սեպտեմբերի 24-ին պետական, պաշտոնական և ժողովրդական հանդիսությամբ պաշտոնապես բացվեց ՀՀ հյուպատոսարանը Հալեպում: Քաղաքի պատվաբեր թաղամասերից մեկում գտնվող հյուպատոսարանի շենքը, որը վերանորոգվել և կահավորվել էր հալեպահայ 13 կազմակերպությունների նյութական աջակցությամբ ու ջանքերով, հանդիսանում էր նախկին «Ալեպպո» կոլեջի գլխավոր մասնաշենքը: Այն 10 տարի ժամկետով անհատույց տրամադրվել էր հալեպահայ ավետարանական եկեղեցու կողմից և ընդմիշտ կարող էր տրվել Հա-

[1] «Յառաջ», Փարիզ, 27.04.1993:
[2] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 143, էջ 91:
[3] Նույնը, գ. 249, էջ 69:
[4] «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 12.01.1994:
[5] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 249, էջ 3:

յաստանին[1]: Հալեպի գլխավոր հյուպատոսարանը ներառում էր Հալեպի, Հոմսի, Համայի, Լաթաքիայի, Տարտուսի, Իդլիբի, Հասաքայի և Դեյր-Զորի քաղաքներն ու նահանգները: Բացմանը ներկա էին հյուպատոս Լևոն Սարգսյանը, հավատարմատար Դավիթ Հովհաննիսյանը, մերձակա երկրների ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչները և Սիրիայի արտգործնախարարության և օտարերկրյա դիվանագիտական ծառայությունների ներկայացուցիչներ, պետական հյուրեր: Հյուպատոսարանի բացումը Հալեպում շատ կարևոր էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիրիահայերի գերակշիռ մասը ապրում էր այդ տարածքում:

1995 թ. ապրիլի 29-ին Սիրիա ժամանեց ՀՀ պատվիրակությունը՝ վարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ[2]: Վերջինս հանդիպումներ ունեցավ Սիրիայի նախագահի և վարչապետի հետ: Այցելության ընթացքում ստորագրվեցին երկու վարչապետների հանդիպման արձանագրություն, գիտատեխնիկական և տնտեսական համագործակցության համաձայնագիր, կրկնակի հարկումը բացառելու համաձայնագիր: Ստորագրվեցին նաև համաձայնագիր ՆԳՆ-ի միջև համագործակցության վերաբերյալ և օդային հաղորդակցության համաձայնագրեր[3]: Հայաստանի վարչապետի բավականին ներկայացուցչական կազմով այցելությունը Սիրիա և ստորագրված փաստաթղթերը շարունակությունն էին սկիզբ առած հայ-սիրիական բարեկամական հարաբերությունների: Հայկական պատվիրակությունը ջերմ ընդունելության արժանացավ ինչպես պաշտոնական շրջանակներում, այնպես էլ հայ համայնքի կողմից:

1995 թ. հունիսին Սիրիայի խորհրդարանում ստեղծվեց սիրիա-հայկական խորհրդարանական բարեկամության խումբ[4]:

ՀՀ ԱԳՆ հրավերով քաղաքական խորհրդակցություն անցկացնելու նպատակով 1995 թ. հոկտեմբերի 16-20 պաշտոնական այցով Երևան ժամանեց ՍԱՀ ԱԳ փոխնախարար Ռ. Ալուշը, որին ուղեկցում էր նույն նախարարության Արևելյան Եվրոպայի վարչության պետ Հաթիմ Հուսեյնը[5]: Փոխնախարարը իր այցի շրջանակներում հանդիպումներ ունեցավ Հայաստանի ԱԳ նախարար Վ. Փափազյանի, ազգային ժողովի փոխնախագահ Արա Սահակյանի, փոխնախագահ Գագիկ Հարությունյանի, Երևանի քաղաքապետ Վահագն Խաչատրյանի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեց երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես՝ միջազգային կազմակերպություններում երկու երկրների համագործակցության զարգացման, տարածաշրջանային, ԼՂ, հայ-սիրիական միջխորհրդարանական համագործակցության, հայ-թուրքական հարաբերությունների, Հայաստան-Իրան-Սիրիա համագործակցության և հայ-սիրիական հարաբերություններին առընչվող հարցեր: ՍԱՀ փոխարտգործնախարարը, բարձր գնահատելով ՀՀ իշխանությունների վարած քաղաքականությունը, այն համարեց իրատեսական և հավասարակշռված[6]: Պարոն Ռ. Ալուշը եղավ նաև էջմիածնում և հանդիպեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի հետ: Փոխարտգործնախարարը եղավ նաև Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում և ծաղկեպսակ դրեց: Նա եղավ նաև այն շենքում, որը

[1] Տե՛ս «ԱԶԳ», օրաթերթ, 27.09, 1994:
[2] Տե՛ս ՀՀ ԱԳՆ, ՊԴԱ, գ. 249, էջ 70:
[3] Նույնը, էջ 4:
[4] Նույնը, էջ 5:
[5] Նույնը, գ. 248, էջ 107:
[6] Նույն տեղում:

տրամադրել էր ՀՀ կառավարությունը Երևանում Սիրիայի դեսպանություն բացելու համար և քաղաքապետի հետ քննարկեց շենքի հետ կապված հարցեր: Հոկտեմբերի 19-ին ՀՀ ԱԳՆ շենքում ՍԱՀ ԱԳ փոխնախարար Ռ. Ալուշը և ՀՀ ԱԳ փոխնախարար Է. Զուլոյանը ստորագրեցին «ՀՀ և ՍԱՀ միջև հյուպատոսական համագործակցության մասին համաձայնագիր»[1]:

Սիրիայի արտգործնախարարության բարձրաստիճան պաշտոնյաները բարձր էին գնահատում հայ-սիրիական հարաբերությունների մակարդակը, սակայն բավականին զուսպ դիրքորոշում ունեին որևէ լուրջ քաղաքական գործողություն իրականացնելու հարցում: Ինչպես տեսնում ենք, մինչ այժմ առավել նախաձեռնողը հայկական կողմն էր, որը, ճիշտ է, միշտ էլ արժանանում էր սիրիական կողմի շատ ջերմ ու բարեկամական վերաբերմունքին, բայց միաժամանակ շատ զուսպ և զգուշավոր քաղաքականությանը: Մեր կարծիքով պատճառը թուրք-սիրիական հարաբերությունների լարված լինելն էր: Սիրիական կողմը փորձում էր խուսափել այնպիսի քայլերից, որը կարող էր առիթ տալ թուրքական զանգվածային լրատվամիջոցներին հակահայկական և հակասիրիական քարոզչություն ծավալել: Թուրքիայում լրատվամիջոցները շատ մեծ ազդեցություն ունեին հասարակական կարծիքի վրա, ինչը կառավարության անկայունության կամ թուլության պայմաններում կարող էր դառնալ որոշիչ:

1997 թ. մարտին ՀՀ արտգործնախարար Ալիկ Արզումանյանը իր մերձավորարևելյան այցելությունների շրջանակում աշխատանքային այցով եղավ Սիրիայում[2]: ԱԳ նախարարը հանդիպումներ ունեցավ ՍԱՀ վարչապետի , նախագահի և այլ պաշտոնատար անձանց հետ: Քննարկվող հիմնական թեմաները տարածաշրջանային խնդիրներն էին՝ արաբաիսրայելյան հակամարտություն, ԼՂ խնդիր, Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Իսրայել, Սիրիա-Թուրքիա, Սիրիա-Իսրայել հարաբերություններ և այլն: Կարևորվեց նաև հայ-սիրիական ջերմ և բարիդրացիական հարաբերությունների պահպանումն ու զարգացումը: Գլխավոր թեմաներից էր Հայաստանում Սիրիայի դեսպանատան բացումը[3]:

Ի դեպ Հայաստանում Սիրիայի դեսպանատան բացման հարցը երկար տարիներ ձգձգվում էր: Սիրիական կողմը պատճառաբանում էր ֆինանսական դժվարություններով, սակայն մենք կարծում ենք, որ բացի ֆինանսական խնդիրներից կային որոշակի քաղաքական դրդապատճառներ: Դեռևս 1995 թվականի հոկտեմբերին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ուղերձով դիմեց ՍԱՀ Հաֆեզ Ասադին՝ տեղյակ պահելով, որ Հայաստանը պատրաստ է նվիրատվության կարգով սիրիական կառավարությանը հանձնել շենք Երևանում՝ դեսպանություն բացելու համար[4]:

Չնայած նման ժեստին՝ սիրիական կողմը երկու տարի ևս ձգձգեց դեսպանության բացման հարցը: Մեր կարծիքով պատճառներից մեկը Ղարաբաղյան հակամարտությունն էր. Սիրիան չէր ցանկանում նման բացահայտ վերաբերմունք ցույց տալ իսլամական պետության հետ հակամարտության մեջ գտնվող Հայաստանի հանդեպ, չէր ուզում գրգռել Սաուդյան Արաբիային, որը ղարաբաղյան հիմնահար-

[1] Նույնը, էջ 108:
[2] www.mfa. Am/hy/country-by-country/sy/.
[3] Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ.143, էջ 1:
[4] Նույն տեղում:

ցում միանշանակորեն աջակցում էր Ադրբեջանին[1] և հրաժարվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: Սիրիան միաժամանակ նկատի ուներ Թուրքիային, որի հետ առանց այդ էլ ուներ մի շարք վիճահարույց խնդիրներ: Եթե դրան էլ գումարենք տեղական իսլամական որոշ շարժումները, ապա պատկերը պարզ կդառնա:

Մեր կարծիքով Սիրիան պատրաստ էր դեսպանատներ բացելու միաժամանակ թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում, որը, սակայն, մեր կարծիքով կապված էր ֆինանսական դժվարությունների հետ: Այնուամենայնիվ 1997 թ. սեպտեմբերին ՀՀ-ում նա նշանակեց իր հավատարմատարին[2], որը տեղի ունեցավ թուրք-իսրայելական ռազմական պայմանագրի ստորագրումից հետո[3]: Սիրիան այս պայմանագիրը դիտարկում էր որպես իր անվտանգությանը սպառնացող դաշինք: Զուգահեռաբար աճում և զարգանում էին հայ-ռուսական և հայ-իրանական հարաբերությունները: Ինչ վերաբերում է հայ-իսրայելական հարաբերություններին, ապա այս հարցում Հայաստանը միշտ մեծ զսպվածություն է ցուցաբերել: Միաժամանակ սառեցվել էր սիրիա-իսրայելական հակամարտության կարգավորման խաղաղ գործընթացը:

Այսպիսով, Հայաստանում Սիրիայի դեսպանատան բացումը, մեր կարծիքով, որոշակի առումով քաղաքական իրավիճակի թելադրանք էր: 1998 թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՍԱՀ դեսպանատան շենքի բացման արարողությունը,[4] որին ներկա էին Հայաստանի վարչապետ Արմեն Դարբինյանը, փոխխոսնակ Ալբերտ Բազեյանը, արտգործնախարար Վարդան Օսկանյանը, Հայաստանում հավատարմագրված դեսպաններ և այլ պաշտոնական անձինք: Սիրիական կողմից ներկա էին էկոնոմիկայի և արտաքին առևտրի նախարար Մուհամմեդ ալ-Իմադին և ներքին առևտրի նախարար Նադիմ Ակալին: Ողջունելով հավաքվածներին՝ Սիրիայի գործերի հավատարմատար Համիդ Հասանը հայտնեց իր խորին երախտագիտությունը Հայաստանի ղեկավարությանը դեսպանատան շենքի տրամադրման համար: Պարոն Հասանը նշեց, որ հայ-սիրիական բարեկամության պատմությունը իր արմատներով գնում է խոր անցյալ՝ ստանալով նոր համալրում 20-րդ դարի սկզբում: Եզրափակելով իր խոսքը՝ նա Հայաստանին ցանկացավ բարգավաճում և զարգացում: Շնորհավորելով ներկաներին Հայաստանի վարչապետը Հայաստանի ղեկավարության անունից հայտնեց իր գոհունակությունը երկու երկրների հարաբերությունների դինամիկ զարգացման առնչությամբ:

Եզրափակելով Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության դիվանագիտական հարաբերությունների հաստատման սկզբնական փուլը՝ կարելի է արձանագրել, որ դրանք բավականին ջերմ ու բարիդրացիական էին: Չնայած նրան. որ հարաբերությունների հիմնական նախաձեռնող կողմը Հայաստանն էր, այնուամենայնիվ կարծում ենք, որ դա շատ բնական էր ու նորմալ, քանի որ մենք նոր էինք բռնել անկախության ուղին և պետք է ավելի շահագրգռված լինեինք եռանդուն կերպով փոխշահավետ հարաբերություններ հաստատելու օտարերկրյա պետությունների հետ: Սիրիայի հարցում դա բացատրվում էր նրանով, որ

[1] Տե՛ս Ա. Փաշայան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը, Ղարաբաղ, Երևան, 2003, էջ 215:
[2] Տե՛ս ՀՀ ԱԳՆ, ՊԴԱ, գ. 143, էջ 92:
[3] www, meforum.org/128/turkey-and-israel-strateyire.
[4] Տե՛ս «Республика Армения», օրաթերթ, 11.12.1998 r:

Սիրիան իր տնտեսության բարեփոխման ժամանակաշրջան կ. ապրում[1], որի համար ֆինանսական մեծ ներդրումների կարիք ուներ, ուստի արտաքին քաղաքականության հիմնական շեշտը ուղղված էր զարգացած պետությունների հետ հարաբերությունների բարելավմանը: Միևնույն ժամանակ Սիրիան միջինարևելյան խաղաղ գործընթացի հիմնական մասնակիցներից էր և առանցքային դեր ուներ այդ գործընթացում, որը զբաղեցնում էր նրա արտաքին քաղաքականության ծանրակշիռ մասը: Այս պատճառով նա ԱՊՀ երկրների հանդեպ հատուկ մշակված քաղաքականություն չի ունեցել և կարելի է նույնիսկ ասել, որ անուշադրության է մատնել: Ռուսաստանից հետո Հայաստանը նախկին ԽՍՀՄ միակ հանրապետությունն էր, որի հետ Սիրիայի հարաբերությունները որոշակի զարգացում են ապրել ԽՍՀՄ փլուզումից հետո (1996 թ. Թուրքմենստանը ևս հավատարմատար նշանակեց Սիրիայում):

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախացումից հետո 1990-ական թվականներին ՀՀ և ՍԱՀ միջև հաստատվեցին կայուն դիվանագիտական հարաբերություններ, որոնք ամրապնդվեցին ամենաբարձր մակարդակի բազում այցելություններով, ստորագրված միջպետական պայմանագրերով, համաձայնագրերով և երկու երկրներում դեսպանատների բացումով:

Ара Оганесян, Об установлении и развитии дипломатических отношении между Республикой Армения и Сирийской Арабской Республикой. - В 1991 году после провозглашения независимости Республика Армения приступила к установлению дипломатических отношении. В декабре 1991 года Сирия признала независимость Армении, после чего в марте 1992 года в Дамаске было подписано соглашение об установлении дипломатических отношении между Республикой Армения и Сирийской Арабской Республикой. С ноября 1992 года в Сирии начало работу посольство Армении, а в 1997 году открылось посольство Сирии в Армении. Для развития двустороннего сотрудничества было подписано множество межправительственных договоров и соглашении.

Ara Hovhannisyan, On the establishment and development of diplomatic relations between the Republic of Armenia and Syrian Arab Republic. - In 1991 after declaration of independence Republic of Armenia established diplomatic relations. In December 1991 Syria recognized the independence of Armenia whereupon in March 1992 an agreement was signed on the establishment of diplomatic relation between Republic of Armenia and Syrian Arab Republic in Damask. Since November 1992 in Syria started function the embassy of Armenia and in 1997 the embassy of Syria was opened in Armenia. Great number of intergovernmental agreements and treaties were signed for development of bilateral collaboration.

[1] www.merip.org/mer/mer213/change-stasis-Syria-o.